CCBE-Ն ԻՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆԵԼ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԿՈՒ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

03.03.2023 17:45

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդը (CCBE), որը ներկայացնում է 46 երկրների փաստաբաններին ու փաստաբանական միությունները, և նրանց միջոցով ավելի քան 1 միլիոն եվրոպացի իրավաբանների, իր մտահոգությունն է հայտնել փաստաբաններ Մարզպետ Ավագյանի և Էմանուել Անանյանի նկատմամբ՝ ոստիկանության աշխատակիցների կողմից վերջերս կատարված ֆիզիկական և բանավոր ոտնձգության վերաբերյալ:

Ընդգծենք, որ ՀՀ փաստաբանների պալատը դիմել էր Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդին (CCBE)՝ կոշտ արձագանք և դիրքորոշում ստանալալու ակնկալիքով, քանի որ հիշյալ կառույցը մեծ ուշադրություն է դարձնում մարդու իրավունքների և օրենքի գերակայության հարգմանը և հատկապես մտահոգված է ամբողջ աշխարհում իրավապաշտպանների իրավիճակով:

ՀՀ փաստաբանների պալատի դիմումին ի պատասխան՝ հաղորդվում է, որ ուսումնասիրելով դեպքը և ՀՀ փաստաբանների պալատի կողմից ներկայացված դիմումը Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդը հասկանում է, որ փաստաբաններ Մարզպետ Ավագյանն ու Էմանուելը Անանյանը ոստիկանության բաժնում էին՝ պաշտպանելու իրենց պաշտպանյալների շահերը, ովքեր անչափահաս են և ովքեր պնդում էին, որ իրենց խոշտանգել և ծեծել են նույն ոստիկանները, ովքեր հարձակվել են և փաստաբանների վրա:

Ստորև ներկայացնում ենք նաև Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) պաշտոնական գրությունը և ոչ պաշտոնական թարգմանությունը՝ հայերեն լեզվով.

ԲԵՌՆԵԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

ԲԵՌՆԵԼ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

Նշենք նաև, որ CCBE-ն այս մասին գրառումներով է հանդես եկել սոցիալական տարբեր հարթակներում, որոնց հղումները ևս ներկայացնում ենք ստորև.

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })